№ 147 ՀԻՆԳՇԱԲԹԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26 **1891** ՀԻՆԳՇԱԲԹԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26 № 147

ՏԱՍՆ ԵՒ ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ԱՌԱՋԻԿԱՅ **1892** ԹԻԱԿԱՆԻՆ

20-ՐԴ ՏԱՐԻ **„ՄՇԱԿ“** 20-ՐԴ ՏԱՐԻ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն պրոգրամայով։ Մենք կը ստանանք սեփական ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ և տասն ամսվանը՝ 9 ր., ինն և ութ ամսվանը՝ 8 ր., եօթ ամսվանը՝ 7 ր., վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր., մի ամսվանը՝ 1 ռուբլի։

Գրվել «ՄՇԱԿԻՆ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բարօնսկայա և Բազարնայա փողոցների անկիւնում, Թամամշեվի տանը).

Կայսերութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար պէտք է դիմել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են թէ հայերէն, թէ ռուսերէն և թէ օտար լեզուներով. բառին վճարվում է 2 կոպէկ.

«Մշակի» առաջին երեսի վրա մասնաւոր յայտարարութիւններ չեն տպագրվում, այլ տպագրվում են միմիայն լրագիրների յայտարարութիւնները, մահացուցակները և պաշտօնական հաստատութիւնների յայտարարութիւնները, որոնց համար կրկնակի է վճարվում։ Մահացուցակի տպագրելը առաջին երեսի վրա արժէ 4 ռուբլի, իսկ չորրորդ երեսի վրա՝ 2 ռուբլի։

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ОТКРЫТА ПОДПИСКА

НА ЕЖЕДНЕВНУЮ ГРУЗИНСКУЮ ЛИТЕРАТУРНО-ПОЛИТИЧЕСКУЮ ГАЗЕТУ

„ИВЕРІЯ“

(шестьнадцатый годъ изданія)

Въ 1892 году газета «Иверія» будетъ выходить подъ прежнею редакціею и по прежней программѣ ежедневно, кромѣ дней слѣдующихъ за воскресными и праздничными.

Подписная цѣна газеты съ доставкой и пересылкой:

На 12 мѣсяцевъ	10 р. — к.	На 6 мѣсяцевъ	6 р. — к
» 11 »	9 » 50 »	» 5 »	5 » — »
» 10 »	8 » 75 »	» 4 »	4 » — »
» 9 »	8 » — »	» 3 »	3 » — »
» 8 »	7 » 25 »	» 2 »	2 » — »
» 7 »	6 » 50 »	» 1 »	1 » — »

За границу на годъ 17 руб., на полгода—9 руб. 50 коп.

Подписка принимается не иначе, какъ съ перваго числа каждаго мѣсяца. Подписка и объявленія принимаются исключительно въ Тифлисѣ, въ помѣщеніи редакціи, на Николаевской улицѣ, въ домѣ бывш. кн. Грузинскаго, № 21. Иногородные обращаются съ требованіями:

Тифлисъ. Въ редакцію газеты «Иверія»

1—2 Редакторъ-издатель князь Илья Чавчавадзе.

Եղիսաբէթ Յովհաննիսեան խաչատրեանց, Գաբրիէլ և Գէորգ Միքայէլեան խաչատրեանցները ցաւով սրտի յայտնելով, առաջինը իր ամուսնու, իսկ վերջինները իրանց սիրելի հօր՝ ՄԻՔԱՅԷԼ ԳԱԲՐԻԷԼԵԱՆ ԽԱՉԱՏՐԵԱՆՑԻ մահը, խնդրում են ազգականներին և ծանօթներին շնորհ բերել յուղարկաւորութեան հանդիսին հինգշաբթի, դեկտեմբերի 26-ին, ժամը $10^1/_2$-ին սեփական տանից, որը գտնվում է Մաեսեի բանտի դիմաց № 6։ 1—1

ԱՏԱՄՆԱԲՈՑԺ

Համազասպ Յովսէփեան

ՕՐԲԷԼԻ

Սօլոլակայա փողոց, սեփական տանը №№ 14—16

ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՀԻՒԱՆԴՆԵՐԻՆ { առաւօտեան 8 ժամից մինչև 10 ժ. և երեկոյեան 4 ժամից մինչև 6 ժ.

կիրակի և տօն օրերին առաւօտեան 8 ժամից մինչև 2 ժամ կէսօրից յետոյ։ 3—150

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դրական և բացասական բնաւորութիւն կրող ընթերցանութիւն.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վրաց թատրօն. Երկու խօսք. Նամակ Դարաչիչագից. Նամակ Աւէքսանդրօպօլից. Նամակ Խմբագրին. Նամակ Խմբագրին. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Տեղեկութիւններ Թիւրքաց Հայաստանից. Կ. Պոլսի ընթացիկ դէպքեր. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.— ԲՈՐՍԱ. — ՏԵՂԵԿԱՑՈՑ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԴՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՑԱՍԱԿԱՆ ԲՆԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԿՐՈՂ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

—

Դրական բնաւորութիւն կրող ընթերցանութիւն մենք անուանում ենք այն տեսակ ընթերցանութիւն, որը կամ դաստիարակիչ ներգործութիւն ունի ընթերցողի վրա, արթնացնելով նրա թմրած, անշարժ ուղեղը, դրդելով նրան դէպի նոր, լուսաւոր գաղափարների, դէպի ընդհանուր մարդկային քաղաքակրթական մտքերի ընդունելը, կամ առանց վերացական կրթիչ մտքեր յայտնելու, ուղղակի տալիս է ընթերցողին դրական նիւթ, մատչելի ժողովրդական ձեւով ուսումնական հմտութիւններ։

Ժողովրդին առաջին տեսակի դրական բնաւորութիւն կրող ընթերցանութիւն տալը՝ առաջադէմ, ժողովրդի մէջ լուսաւորութեան տարածման նախանձախնդիր պարբերական մամուլի կոչումն է, իսկ ամբոխին երկրորդ տեսակի դրական բնաւորութիւն կրող ընթերցանութեան տալը՝ ժողովրդական գրքերի պարտականութիւնն է։

Ի՞նչ է, ուրեմն, բացասական բնաւորութիւն կրող ընթերցանութիւնը։

Դա այն տեսակ, կամ այն ձևի ընթերցանութիւն է, որն իր համար նպատակ է դրել տպագրական խօսքի միջոցով ժողովուրդն անդադար անշարժութեան մէջ պահելու, ամեն նորամուծութեան, ամեն լուսաւոր նոր մտքի դէմ մաքառելու, ամբոխը միշտ իր հին դրութեան, իր նախապաշարմունքի մէջ թողնելու, միշտ և անդադար վառ պահելու տգիտութիւնից առաջացած ժողովրդի տգեղ և ստոր բնազդումները, ինստինկտները։

Արդեօք ո՞րն է աւելի գովելի, աւելի տրամաբանական, աւելի նպատակայարմար, աւելի աղնիւ,—հիւանդ կազմուածքին առողջ, թարմ, դիւրամարս սնունդ տալ, պայծառ լոյս և մաքուր օդ մատակարարել, թէ միշտ ջանալ հիւանդ կազմուածքը կերակրել անմարսելի, ստամոքսը ծանրացնող նահապետական, հինաւուրց կերակուրներով, մի և նոյն ժամանակ ամեն միջոց գործ դնել այդ նոյն հիւանդ օրգանիզմը՝ լոյսից զուրկ, նեխված օդի մէջ պահպանելու....

Թող ընթերցողը ինքն դատէ այդ երկու սիստեմներից ո՞րն է լաւը, երկուսից ո՞րն է նախապատուելին։

Մի կողմից՝ լոյս, առողջարար, մաքուր օդ, թարմ, առողջ, դիւրամարս սնունդ,—հետևանքը՝ ձգտում դէպի առողջացումը։

Միւս կողմից՝ խաւար, նեխված օդ, հնադարեան, նահապետական, անմարսելի սնունդ,—արդասիքը՝ կազմուածքի փտումն ու քայքայումն։

Այժմ, երբ վերջանալու վրա է տասն և իններորդ դարը և արագ քայլերով է մօտենում մեզ քսաներորդ դարը,—ժամանակ է ամեն ազգի համար որոշ և անկեղծ կերպով ընտրել այդ երկու ճանապարհներից մէկը....

Եւ ահա մենք էլ, այն բոպէին, երբ տարին վերջանալու վրա է, երբ «Մշակի» հետևեալ 148-որդ համարը հրատարակելով մենք կը փակենք մեր լրագրի գոյութեան 19-որդ շրջանը,—դիմում ենք հայ ընթերցող հասարակութեանը և վստահանում հարց առաջարկել՝ վերոյիշեալ երկու տարբեր ճանապարհներից ո՞րն է կամենում վճռողապէս ընդունել հայոց ժողովուրդն ապագայում։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎՐԱՑ ԹԱՏՐՕՆ

—

Ինչպէս ասեցինք, ուրբաթ, ամսիս 20-ին, Թիֆլիսի Կալուածական Բանկի թատրօնում վրաց դրամատիական խումբը, մասնակցութեամբ սիրող երգիչների և երգչուհիների, մասամբ էլ Արքունական թատրօնի նախկին օպերայի նուագախմբի՝ ներկայացրեց վրացերէն լեզուով Օդրանի «Կարմիր արև» (La Mascotte) օպերէտը։ Աւելի աչքի էին ընկնում իրանց ձայնով տ. Ջնէլաձէ և պ. Իվէրիէլի։ Թատրօնը լի էր։ Ինչ ասել կուզէ որ օպերէտի ծիծաղաշարժ տեղերը անզուսպ ծիծաղ էին յարուցանում հանդիսականների մէջ, թէև ուրիշ կողմից պէտք է խոստովանել, որ ներկայացնողները շատ հեռու էին այն շնորհալի ձևերից, որոնք անհրաժեշտ են ֆրանսիական օպերէտներ ներկայացնելու, ձևեր, որոնք միմիայն ֆրանսիացիներին ու մանաւանդ ֆրանսիուհիներին են յատուկ։ Իսկ առանց այդ շնորհալի ձևերի՝ օպերէտը մի և նոյն է, ինչ որ կերակուրը առանց աղի։ Այո, այդ ներկայացման մէջն էլ ամեն բան կար, միայն աղ չը կար։

Այսպէս թէ այնպէս վրաց թատրօնի առաջադիմութեան համար ցանկալի չէ, որ այդ տեսակ ներկայացումները շարունակվէին։ Եթէ շնորհ չը կայ բեմի վրա օպերա, օպերա-կոմիկ կամ նոյն իսկ լուրջ օպերէտ դնելու,—«կարմիր արևի» պէս թեթև, անբովանդակ, բուն ֆրանսիական ժանրին յատուկ օպերէտները հաշիւ թէ որ և է կրթիչ ներգործութիւն կարող են ունենալ մեր թէ վրաց և թէ հայոց հասարակութեան վրա, որը դեռ ևս կարօտ է գեղարուեստական սիստեմական կրթութեան։ Այդ տեսակ անբովանդակ և միայն հեշտասիրութեան զգացմունքները գրգռող օպերէտները այն վտանգ էլ կարող են ներկայացնել, որ գրաւելով վրաց հասարակութիւնը իրանց թեթևութեամբ և զգացմունքների խորութեան բացակայութեամբ,—կարող են իսպառ մեռցնել նորածին վրաց դրաման, կարող են մեռցնել դեռ ևս նոր ծնվող վրաց բեմական լուրջ գեղարուեստը։

***

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

—

Պ. ***, «Մշակ»-ի խմբագրութիւնը իմ և ձեր բանակռուի շարունակվելը անհետաքրքրական է համարում իր լրագրի ընթերցողների համար. այդ պատճառով ես ստիպված եմ պատասխանել ձեզ երկու խօսքով, քանի որ իմ ձեզ ուղղած աւելի ընդարձակ պատասխանը խմբագրութիւնը չէ տպագրել։

Պ. ***, ցաւում եմ, որ ստիպված էի ձեզ բացատրել մի չափազանց տարրական ճշմարտութիւն, այն է՝ թէ «պակվիլը կեղտոտ ու ստոր բան է»։ Ցաւում եմ, որ ստիպված եմ ձեզ յիշեցնել տասը պատուիրանքներից մէկը—«սուտ մի խօսիր»։ Ցաւում եմ, որ ստիպված եմ ձեզ յայտնել, որ զրականական այն բանակռիների ժամանակ, որոնք մասամբ յարձակումներ են պարունակում հակառակորդի անձնաւորութեան վրա, ընդունված չէ և ասպետական զգացմունքի զուրկ վնելու նշան է համարվում կեղծ-անուանակ ծածկվելը։ Ցաւում եմ վերջապէս, որ ստիպված եմ կրկնել, ձեզ դարձնելով խօսքս, մեծ մատենագրի անմահ խօսքերը—«Со словомъ надо обращаться честно»։

Մոսկվա. Տ. Յովհաննիսեան

ՆԱՄԱԿ ԴԱՐԱՉԻՉԱԳԻՑ

—

Դեկտեմբերի 16-ին

Ձմեռն է արդէն։ Դարաչիչագի շրջանը այժմ խոր ձիւնով է ծածկված։ Երկրագործ դասակարգը, դադարած իր դաշտային պարապմունքներից, անհոգ կերպով զբաղված է այժմ իր անասունները խնամելով միայն։ Նա այդ երկար ձմեռը, որ տևում է 5—6 ամիս, փակվելով իր տան մէջ, ոչինչ ընդունակութիւն չէ ցոյց տալիս մի որ և է կողմնակի պարապմունք ձեռք բերելու, որը գուցէ աւելի նպաստաւոր կը լինէր իր տնտեսական բարեկեցութեանը, այլ ամբողջ ձմեռը գիւղացին նուիրվում է դատարկաբանութեան և անհաւատալի առասպելախօսութեան... Գիւղացին, ինչպէս ինքն ընդունակութիւն չունի ձմեռն աշխատելու և մի որ և է գործի ձեռնամուխ լինելու, ապրուստի կողմնակի աղբիւր բաց անելով, վստահութիւն չէ ունենում նոյնպէս

իր աշխատող անասունները—եղներն ու գոմէշները—իր տաք գոմից դուրս հանելու և նրանց բանեցնելու, այլ ամբողջ ձմեռը, ինչպէս ինքը, գիւղացին, այնպէս էլ նրա լծկանները դատապարտված են չորս պատի մէջ փակված մնալ և թարմ ու մաքուր օդից զուրկ լինել...

Ձմեռը սկսվելուն պէս Դարաչիչագի հայ աղգաբնակութիւնը մտնում է իր պատմական—ժառանգական թովլի «հօղան»: Գեղջկական այդ ժողովարանը ձմեռ ժամանակ ծառայում է գիւղացիներին իբրև գիւղական կլուբ, որտեղ զանազան զրախօսութիւններով և հեքիաթներով սպանում են թանգագին ժամանակը: Դա մի յայտնի ակսիօմա է:

Ասեցինք, որ Դարաչիչագի ժողովուրդը երկարատև ձմեռն անց է կացնում առանց մի որ և է զբաղմունքի և բացի իր տնային ներքին պարապմունքից նա ոչնչով գրեթէ չէ հետաքրքրվում: Դրսի արդիւնաւոր որ և է պարապմունքը դէպի ինքը չէ հրապուրում պարապ գիւղացուն և պատմական թովլի «հօղայից» դուրս նրա միտքը, նրա ուշադրութիւնը ոչ մի բան չէ գրաւում... Այդ ևս յայտնի ակսիօմա է:

Կան մարդիկ, կան դասակարգեր, որոնք ձմեռը աւելի են աշխատում, աւելի են վաստակում, քան թէ ամառ ժամանակ, բայց Դարաչիչագի գիւղացիները այդ չը գիտեն և ոչ մի կերպով չեն յարմարվում ժամանակակից կեանքի աւելի թեթև, աւելի կանոնաւոր պահանջներին: Նրանք գոհ են միայն, որ ունենում են տարեկան մի քանի «կօդ» ցորեն և գարի, և յուսով են, որ այդ աննշան քանակութիւն հացահատիկներով կարող են իրանց ընտանիքը ամբողջ ձմեռը կերակրել...

Եթէ յիշեալ շրջանի հայ աղգաբնակութիւնը ձմեռն անցնում է առանց մի որ և է պարապմունքի, այդ տեսակէտից հարկաւոր ենք համարում նրա ուշադրութիւնը դարձնել մի աւելի պատշաճաւոր և ամենաանհրաժեշտ հարցի վրա, այն է իրանց զաւակների կրթութեան և դաստիարակութեան կարևորութեան վրա: Թող այդ շրջանի գիւղացիները գոնէ ձմեռ ժամանակ (որովհետև ամառը զբաղվում են իրանց դաշտային պարապմունքներով) խորհեն իրանց երեխաների մտաւոր զարգացման գործի մասին և ուսումնարանների հիմնարկութեան կարևորութիւնը հասարակական առաջնակարգ խնդիրներից մէկը դարձնեն...

Դարաչիչագի գաւառամասը օրինակ վերցնելով իր հարևան գաւառներից, մտաւոր առաջադիմութեան վերաբերմամբ, թող քայլ առ քայլ հետևէ նրանց գործունէութեանը, այն գաւառների, ուր հետզհետէ բավականում է թէ տարրական ուսումնարանների, թէ ծխական-եկեղեցական դպրոցների և թէ մատաղ սերնդին կրթութիւն մատակարարող այլ հիմնարկութիւնների թիւը, թէև այդպիսի գաւառների աղգաբնակութիւնը, կարող եմ ասել, նիւթական և ֆինանսական տեսակէտից այնքան էլ բարձր աստիճանի վրա չէ կանգնած, քան Դարաչիչագի շրջանի ժողովուրդը:

Եւ վերջապէս այդ գաւառակի մի քանի գիւղերի բնակիչները թող չը բաւականանան նրանով, որ իրանց մանուկները, հաւաքվելով մի որ և է խրճիթում կամ գոմում, սովորում են գիւղական խալիֆաների կամ ինքնակոչ վարժապետների մօտ: Այդ չէ նշանակում, որ իրանց երեխաները կարդում են, որոնք նոյն իսկ լոկ գրել-կարդալն անգամ կանոնաւոր կերպով չեն սովորում... Այլ դա մի կատարեալ ինքնախաբէութիւն է և ուրիշ ոչինչ:

Եթէ մեր գիւղացիները այդպէս շարունակեն իրանց զաւակներին գիւղական տիրացուների մօտ ուսուցանել տալը,—այն ժամանակ նրանց որդիքը կը մեծանան և կը մնան այնպէս անուս, անկիրթ, ինչպէս իրանք են...

Թող լաւ ուշադրութիւն դարձնեն այդ հանգամանքի վրա մեր գիւղական տանուտէրերը, որոնց ձեռքումն է համարեա գեղջկական—հասարակական ընդհանուր գործերի ղեկը...

Գ. Ս.

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐՈՊՕԼԻՑ

—

Դեկտեմբերի 20-ին

Անձրևային աշնանը յաջորդեց սառն ձմեռը: Եղանակը այժմ խիստ ցուրտ է և R 23°-ին է հասնում: Քաղաքիս չքաւոր մասը շատ նեղութիւն է կրում վառելիքի կողմից, մանաւանդ որ ցրտից և մրսելուց առաջ են գալիս զանազան հիւանդութիւններ:

Գաւառապետի պաշտօնակատար պ. Ցիդանկովի հրամանով քաղաքիս խանութները կիրակի օրերը այժմ սկսել են փակել: Այդ գովելի կարգադրութեան համար պ. Ցիդանկով արժանի է անհուն շնորհակալութեան: Երանի թէ այդ կարգադրութիւնը չը խախտվի և քաղաքիս բնակիչները Տէրունական օրը սուրբ պահեն:

Բաւական ժամանակ է, որ քաղաքիս մէջ կազմվեց «Կովկասեան հայոց Բարեգործական ընկերութեան» այստեղի ճիւղը, սակայն մինչև օրս ընկերութեան ղեկավարները ոչ մի գործ չը կատարեցին. արդեօք ինչ նպատակ ունի անդամակցական վճար ստանալ և ոչինչ գործ չը կատարել. ժողովրդի փափաքն այն է, որ օր առաջ ունենայ մատենադարան-ընթերցարան, ունենայ մի տեղ, ուր կարելի լինի բարոյական մնունդ ստանալ: Հրաւիրում ենք քաղաքիս յաջորդ հայր Սաթունեանցի բարի ուշադրութիւնը այս հանգամանքի վրա: Հասարակաց ընթերցարան ունենալու հարցը մեր քաղաքի համար նոր չէ. դեռ 1883 թուին «Մշակի» միջոցով մենք յորդորեցինք բանալ հասարակաց դրադարան-ընթերցարանը, աչքի առաջ ունենալով, որ մեր քաղաքը զուրկ է կիրակեայ դպրոցներից, չը կայ հասարակաց մի տեղ, բացի զինետներից և զայֆէտներից: Եւ իրօք, հասարակ դասակարգը ուր պէտք է գնայ. կլուբ, հիւրանոց նրան անմատչելի են և ունեն իրանց ՀԱՍԱԿԱՐ կողմերը. ինչ և իցէ թղթախաղով վարակվելը փոքր ցաւ չէ. զինետուն, զայֆէ նոյնպէս արբեցողութիւն տարածելու միջոցներ են և նոյնքան ՀԱՍԱԿԱՐ: Ուրեմն պարզ է, որ մեր քաղաքում մինչև այժմ չը կայ մի օրինաւոր տեղ, ուր երկու անձինք, առանց ՀԱՍՎԵԼՈՒ կարողանան իրար կարծիք խմանալ, իրար հետ խօսել. այդ դէպքում հասկանալի է, թէ որքան օգտակար և միանդամայն անհրաժեշտ է հասարակաց մատենադարան-ընթերցարանի գոյութիւնը. այդ էր պատճառը, որ անցեալ 1890 թուին, դեկտեմբերի 14 «Բարեգործական ընկերութեան» ընդհանուր ժողովում անդամներս վճռեցինք 400 ր. յատկացնել «մատենադարանի» համար: Անցաւ 1890—91 և շուտով կը մտնենք 1892 թիւը, սակայն մինչև օրս դեռ «հասարակաց դրադարան» չունենք:

Վերջին ժամանակներս ընտրվեցան եկող 1892 թուի համար քաղաքիս դեպուտատներ՝ պ.պ. Արշակ Խան-Անուշեան և Յակոբ Տէր-Պողոսեան. նոր դէպուտատների շնորհով յոյս կայ, որ մեր քաղաքի գործերը աւելի լաւ դրութեան մէջ լինեն:

Ռուս սովեալների օգտին տեղիս թատերասէրները, դեկտեմբերի 15-ին, խաղացին «Ռուզան» ողբերգութիւնը և «Դալալ Ղաղօ» վոդեվիլը: Մուտքը բաւարար էր:

Շիրակեցի

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Ատարխան, դեկտեմբերի 14-ին

Արդեօք ծաղր է դա, բաղդի բերմունք, թէ պատահմունք, չը գիտեմ, որ անընդունակ մարդիկ հասարակական գործերի գլուխ են կանգնած և իրանց ձեռքում բռնած ունեն ամբողջ սերունդի վիճակը: Իսկ անկեղծ և աշխատասէր մարդիկ գործերից հեռու ստիպված են մնալ:

Ձեր լրագրի № 136-ի յօդուածը «Ո՞վ է Բաֆայել Պատկանեան» կարծեմ կատարելապէս արդարացնում է իմ ենթադրութիւնս: Այդ դեռ քիչ է, որ այդ տեսակ գործիչներ զրկում են երիտասարդին ուսում ստանալու միջոցներից և ծերունի հօրը իր ապագայ նեցուկից, բայց նրանք ներշնչում են աղնիւ գործիչների, մտաւոր մշակների սրտերում, որոնք զոհում են յօգուտ ընդհանրութեան իրանց աշխատանքը, առողջութիւնը և նոյն իսկ իրանց նիւթական միջոցները՝ ամենամեծ յուսահատութիւն ապագայի մասին, թէ իրանց անձի և թէ իրանց ընտանիքների վերաբերմամբ:

Այն ամօթի զգացմունքը, որ ստիպեց ձեզ, պ. խմբագիր, զոհել ձեր սուղ նիւթական միջոցներից յօգուտ երիտասարդ Պատկանեանի ամսական 5 ռուբլի, որպէս զի նա շարունակել կարողանայ իր ուսումը, նոյն ամօթի զգացմունքը թելադրեց և ինձ իմ համեստ միջոցներից նշանակել երիտասարդի օգտին ամսական 5 ռուբլի, երեք տարի ժամանակով, սկսած առաջիկայ 1892 թուի յունվար ամսից:

Ներփակված ուղարկում եմ ձեզ առաջին կիսամեակի վարձը 30 ռուբլի, խնդրելով ձեզ յանձն առնել հասցնել ըստ պատկանելոյն:

Յովհաննէս Գէորգեան Կիտայեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, դեկտեմբերի 23-ին

«Մշակ» լրագրի № 144-րդ համարում գրած էին Գօրիսից (Զանգեզուրից), թէ այնտեղի ուսումնարանի ուսուցիչներից մէկը հեռացաւ և սպասում են նոր ուսուցչին: Որովհետև այդ հեռացող ուսուցիչն ես եմ, պարտք եմ համարում ի գիտութիւն հասարակութեան առաջ բերել այն պատճառները, որոնք ստիպեցին ինձ տարվայ կիսին հեռանալու:

Ուսումնական տարվայ սկզբին Երևանի թեմի դպրոցների թեմական տեսուչը նշանակեց ինձ Գօրիսի հայոց դպրոցի ռուսաց լեզուի ուսուցիչ, որտեղ և նշանակվում է դպիր Յովսէփ Տէր-Պետրոսեանց: Ուսումը սկսվեց սեպտեմբերի 22-ին: Աշակերտներից մի քանիսին, որոնց նշանակված էր վերաքննել և ապա տեղափոխել բ. և գ. բաժանմունքները, պահանջեցի վերաքննել, իսկ դպիր Տէր-Պետրոսեան թոյլ չը տուեց ինձ անյայտ պատճառներով: Այդ բաժանմունքներում նոր ընդունվողները, որոնք նոյնպէս պէտք է ենթարկվէին քննութեան, նրանց ևս տեղաւորում է առանց իմ գիտութեան: Հայր տեսչի դրութեամբ ես պէտք է օգտվէի, բնակվելով ուսումնարանին կից միակ սենեակում, և նաև վառելիքով: Սակայն դպիրը մեծ մեծ խոստումներ անելով, այդ իրան յատկացրեց: Այս վերջին հանգամանքը, որքան էլ տգեղ, չէր կարող իմ հեռանալուն պատճառ դառնալ, որովհետև այդ դէպքում ՀԱՍՎՈՂը ես էի միայն: Դպիրն աւելի առաջ գնաց իր քաջագործութիւնների մէջ: Դպրի վարմունքներին մի քանի անգամ դիմադրեցի, բայց ոչ մի ազդեցութիւն չունեցաւ նրա վրա, և ստիպված էի, համոզվելով, որ այլ ևս ոչ մի հնար չը կայ, բողոքել հայր տեսչին, խնդրելով մի և նոյն ժամանակ, որ ինձ անպատճառ արձակէ պաշտօնից: Բողոքեցի, որքան յիշում եմ հոկտեմբերի 15-ին: Աշակերտները իմանալով, որ նուաստս խնդրել է հայր տեսչից արձակել պաշտօնից, նոյեմբերի 10-ին դիմում են հայր տեսչին, որ անհետանք թողնի խնդիրս: Դպիր աւագ-ուսուցիչը իմանալով այդ, և կարծելով, որ անպատճառ իմ դրդմամբ է գրված աշակերտների խնդիրը, իսկոյն օգնութեան է կանչում կրօնուսոյց քահանային, պատրաստում են բողոքագիր և ստորագրել տալով հոգաբարձուներին, որոնք հազիւ կարողանում են իրանց աղգանունը ստորագրել, ուղարկում են տեսչին: Նոյեմբերի 25-ին ստացվում է կարգադրութիւն, որ արձակվում եմ: Դպիրը յաղթութեան դափնեայ պսակն տարած գրում է ինձ պաշտօնապէս. «արձակում եմ ձեզ ուսուցչական պաշտօնից և առաջարկում եմ չտապել ազատելու դպրոցս ձեր ներկայութիւնից, որի նպատակը մինչ ցարդ եղել է խախտել և աւերել նորա բարոյական հիմունքները»: Եւ այդպէս գրում է մի անձնաւորութիւն, որի համար «դպրոցի բարոյական հիմունքները» լոկ բառեր են եղած իր ամբողջ գործունէութեան մէջ: Այդ վիրաւորական պաշտօնական, գրութիւնը ամսիս մէկին ուղարկեցի հայր տեսչին: Դպիրը ամեն տեսակ միջոցներ գործ դրեց, որ չը տան ռոճիկս. ուստի ստիպված եղայ հաշտարար դատաւորի միջոցով ստանալու: Ցանկալի էր, որ գործին մօտ ծանօթ մարդիկ, որոնց համար թանգ են աւելի ուսումնարանի շահերը, քան անձնաւորութիւնները, արդարութիւնը երևան հանէին:

Աստանաղ Տէր-Սիմէօնեանց

ՆՆԲԻՆ ԼՈՒՐԵՐ

—

«Մշակի» բաժանորդագրութիւնը շարունակվում է: Գաւառներից պէտք է գրվել միմիայն խմբագրութեան մէջ, դիմելով այս հասցէով. Тифлисъ, Редакція газеты «Мшакъ.» Իսկ Թիֆլիսի բաժանորդները կարող են գրվել հետևեալ տեղերում. 1) «Մշակի» խմբագրատանը, 2) Խիդէկէլի գրավաճառանոցում, 3) Եւանգուլովի լրագրական գործակալութեան դրասենեակում (Գոլովինսկի պրոսպէկտ): Իսկ պ. Միրզա Տէր-Գրիգորեանի մօտ (Սիօնի փողոցում) այս տարի «Մշակի» բաժանորդագրութիւնը այլ ևս չէ ընդունվում: Նրանք որոնք անցեալ տարիները գրվում էին պ. Տէր-Գրիգորեանի մօտ, թող բարեհաճեն ուղղակի դիմել խմբագրութեանը:

—

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ Կ. Պոլսի ռուսաց դեսպան Նէլիդով, որը վերջերս գտնվում էր Պետերբուրգում, դեկտեմբերի 15-ին ճանապարհ է ընկել դէպի Կ. Պոլիս:

—

«Художникъ» հրատարակութեան մէջ տպվում են ռուսաց Հայաստանում պ. Շանտրի կատարած ճանապարհորդութեան տպաւորութիւնները: Հեղինակը, ի միջի այլոց, պատմում է ճարտարապետական մի հրաշքի մասին, որ տեսել է նա Տաթևի վանքում: Վանքի հրաշալիքն է համարվում,—գրում է նա,—շարժվող սիւնը, որը գտնվում է գլխաւոր տաճարի քագում. նա մօտ հինգ սաժէն բարձրութիւն ունի: Այդ հրաշք-սիւնը շարժվում է վերևից տուած ամենաթեթև զարկից, և մի և նոյն ժամանակ այդ սիւնը դիմացել է Տաթևում պարբերաբար կրկնվող սաստիկ երկրաշարժներին:

—

Մայրաքաղաքի ռուս լրագիրները հաղորդում են, որ Թիֆլիսցիներին ծանօթ տաղանդաւոր պիանիստ Ռէյզընաուէր այս ըսպէիս կօնցերտներ է տալիս Պետերբուրգում: Մայրաքաղաքի լրագիրները մեծ գովասանքով են խօսում Ռէյզընաուէրի նուագելու մասին: Եւ իրաւ Ռէյզընաուէր այս ըսպէիս կարող է եթէ ոչ առաջին, գոնէ երկրորդ պիանիստ համարվել ամբողջ քաղաքակիրթ աշխարհում:

—

Աստրախանաբնակ պ. Յովհաննէս Կիտայեանց գրել է մեզ մի նամակ (որը տպագրում ենք մեր լրագրի ներկայ համարում), որի մէջ պարոնը յայտնում է թէ վճարելու է յօգուտ Բաֆայել Պատկանեանի որդու, որը սովորում է Թիֆլիսի Արհեստաւորաց դպրոցում, ամսական 5 ռուբլի, երեք տարի շարունակ: Պ. Կիտայեանց ուղարկել է մեզ արդէն իր կէս տարվայ վճարը, 30 ռուբլի:

—

Կրկին անգամ առաջարկում ենք Վիէննայի և Վենեցիայի Մխիթարեաններին մի փոքր էժանացնել իրանց հրատարակութիւնները և մինչև այժմ տպած գրքերից էլ առնողներին մեծ զիջումն անել: Մենք այդ առաջարկութիւնն անում ենք հէնց նոյն իսկ Մխիթարեանների օգտին, ըստ որում դրանց գրքերը ձեռք բերել ցանկացողները թէև շատ են, բայց գների թանգութեան պատճառով ոչ ոք էլ չէ առնում, և այդպիսով Մխիթարեանների գրքերը մնում են դրսած իրանց պահեստներում:

—

Հրաւիրում ենք Թիֆլիսի քաղաքային սանիտարական բժիշկների ուշադրութիւնը քաղաքի բեստօրանների և շատ հիւրանոցների ծայրայեղութեան հասցրած կեղտոտութեան վրա:

—

Վրաց հրատարակչական ընկերութեան գործերը աջողութեամբ են առաջ գնում: Հասարակութիւնը մեծ համակրութեամբ է վերաբերվում ընկերութեանը, որը հրատարակում է գլխաւորապէս ժողովրդական գրքեր:

—

Մեզ խնդրում են յայտնել որ ԹԻՖԼԻՍԻ Հայուհեաց Բարեգործական ընկերութիւնը դիտաւորութիւն ունի իր օգտին պարահանդէս տալ, ալէգրիով: Պարահանդէսը լինելու է առաջիկայ յունվար ամսի 12-ին:

—

Այսօր, հինգշաբթի, դեկտեմբերի 26-ին ԹԻՖԼԻՍԻ Արքունական թատրօնում, հայոց դերասանական խումբը ներկայացնելու է «Սիսալ հաշիւ» կօմէդիա 4 գործողութեամբ, փոխադրութիւն Ա. Երիցեանի և «Որկրամոլութեան ասողագէտ» կօմեդիա 2 գործողութեամբ, թարգմանութիւն իտալերէնից Դ. Թուրեանի: Սկիզբը 7½ ժամին երեկոյեան: Տեղերի գինը սովորական է:

—

Կովկասեան կայսերական Գիւղատնտեսական ընկերութեան պ.պ. անդամները հրաւիրվում են ընկերութեան հերթական նիստին, որը կայանալու է շաբաթ օր, դեկտեմբերի 28-ին, երեկոյեան 7½ ժամին: Ընթացիկ գործերը կարդալուց յետոյ,

կը քննվի թէ Ընկերութեան և թէ Թիֆլիսի Այգեգործական դպրոցի 1892 թ-ի նախահաշիւը։ Նիստին կարող են ներկայ գտնվել և կողմնակի անձինք։

—

ՄԱՅԿՕՊԻՑ մենք ստացանք հետևեալ հեռագիրը։ «Դեկտեմբերի 14-ին, երեկոյեան 6 ժամին, չէրկէզների մի աւազակային խումբ, կողոպտելու նպատակով մի գաղանային յարձակմունք գործեց Մայկօպից ոչ հեռու գնացող Բելօրէչինսկի արաղի գործարանի վրա։ Զը նայելով որ գործարանում 70 հոգի ծառայող կայ, աւազակները կարողացան սպանել գործարանի կառավարչի մօրը և եղբօրը, ակցիզային վերատեսչի օգնականին, գործարանի պահապանին և վիրաւորեցին դարձեալ չորս հոգուն։ Հինգ հոգի կարողացան փրկվել։ Աւազակներն անհետացան։»

—

Ստացանք Կ. Պոլսից «Արշալուսի Զայներ» վերնագրով մի գիրք, հեղինակութիւն պ. Արշակ Զօպանեանի։ Գրքի մէջ պարունակվում են թէ արձակ և թէ ոտանաւոր գրուածքներ, որոնք հեղինակի երիտասարդական ոգևորութեան արտադրութիւններ պէտք է համարել։ Նոյն գրքից իմանում ենք, որ հեղինակը պատրաստում է լոյս ընծայելու մի կենսագրական-քննադատական գրուածք պօլսեցի վաղաթառամ բանաստեղծ Պետրոս Դուրեանի մասին։

—

Կ. Պոլսի լրագիրները, ի մեծ ուրախութիւն էֆէնդիների, յայտնում են, որ տխրահռչակ Նուրեան էֆէնդին նոր չքանչան է ստացել Թիւրքաց կառավարութիւնից, անկասկած, իր անձնուէր և հաւատարիմ ծառայութիւնների համար...

—

Մեր երիտասարդ նկարիչ, պ. Պողոս Տէր-Աստուրեան խնդրում է մեզ տպագրել հետևեալը. «Պատիւ ունեմ յայտնելու յարգելի հայ հասարակութեանը, որ իմ դեղարուեստական Ալբօմը արդէն լոյս տեսաւ և վաճառվում է Թիֆլիսի Կենտրօնական զրավաճառանոցում։ Ալբօմի գինն է առանց կազմի՝ 5 ռուբլի, իսկ շքեղ կազմով 6 ռուբլի։ Բաժանորդները նոյնպէս կը ստանան իրանց օրինակները Նոյն զրավաճառանոցից, ամսիս 28-ից սկսած։»

—

Մեզ հեռագրում են Պետերբուրգից, որ «Артистъ» պատկերազարդ պարբերական հրատարակութեան մէջ այս օրերս լոյս տեսաւ հանգուցեալ դերասան Ադամեանի պատկերը, նրա կենսագրութեան հետ միասին։

—

Լոյս տեսաւ պատի «Օրացոյց» 1892 թ-ի, աշխատասիրութիւն Մ. Զմշկեանի։ Օրացոյցը փոքր գիրք ունի, և կպցրած է մի թղթեայ տախտակի վրա, որը զարդարված է հայ եպիսկոպոսների,—պէտք է նկատել, բաւական անաջող,—պատկերներով։ Վերևից նկարած է Էջմիածինը և Մասիսը։ Օրացոյցն արժէ 60 կօպէկ, որ թանգ չէ։ Ափսոս որ օրացոյցի մէջ չեն մտցրած զանազան տեղեկութիւններ, որոնք պիտանի են առօրեայ կեանքի համար։

—

Թաւրիզից մի մասնաւոր նամակով մեզ տեղեկացնում են, որ Սալմաստում տեղի ունեցած երկու վարդապետների սպանութեան գործը դեռ չէ վերջացել և քննութիւնը շարունակվում է։

—

Մեզ հաղորդում են, որ ամսիս 24-ին Բագուի հայոց դպրոցի դահլիճում պիտի լինէր գիւղատնտես պ. Ա. Քալանթարի դասախօսութիւնը՝ կթնատնտեսութիւնից և տաւարապահութիւնից։ Մըտադրութիւն կայ նոյն տեղում և մի ուրիշ դասախօսութիւն անել՝ գինեգործութիւնից։ Կը կարդայ պ. Մէլիք-Շահնազարեան։

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են. «Կիրակի, ամսիս 22-ին, մեր նոր ուսումնարանի շինութեան մէջ կատարվեց դպրոցական հանդէս։ Տեսուչը կարդաց դպրոցի վեց տարվայ թէ տնտեսական և թէ ուսումնական մանրամասն հաշիւը։ Ապա կարդացվեց մի գրուածք «մայրենի լեզուի» նշանակութեան մասին, որը իբրև հիմք ընդունած էր երևելի մանկավարժ Ուշինսկու «Մայրենի լեզու» վերնագրով գրուածքը։ Նոյն նիւթի վրա մի քանի խօսք ասեց Կիւրեղ հայր սուրբը։ Հանդիսին ներկայ էր բաւականաչափ բազմութիւն»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԹԻՒՐՔԱՑ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

—

Էրզրումից մեզ գրում են հետևեալը. «Այս տարի այն աստիճան ցուրտ է, որ քաղաքիս բընակչաց մեծ մասը նեղութիւն ունի վառելափայտի կողմանէ, մանաւանդ որ Սօղանլուղի անտառէն արգելեալ է փայտ կտրելը։ Վաճառականութիւնն ընկած վիճակի մէջ է։ Ճանապարհները խիստ վտանգաւոր են քիւրդ և լազ հրոսակներու երեսէն։ Անցեալ Նոյեմբերի 15-ին այդ չարագործներէն մէկը, Իբօօղլին, յարձակվեցաւ Բաշ-Զիֆլիկ գիւղի տանուտէր Ոսկանի տան վրա. չնորհիւ անձնապաշտպանութեան, ոչինչ չը կարողացաւ տանել, սակայն Բայազէտի ճանապարհին այդ գաղանը կը կողոպտէ չորս վաճառականներու և անոնց երկուսին կիսամահ ձգելով, մօտ 50 ոսկու ապրանք կը տանի»։

Կ. ՊՕԼՍԻ ԸՆԹԱՑԻԿ ԴԷՊՔԵՐ

—

Այս օրերս Թիւրքաց կառավարութիւնը քիչ էր մնացել, ուզում էր աքսորել Կ. Պոլսից Գրիգորիս եպիսկոպոս Աչէաթճեանին, որը մի ժամանակ Վանի փոխանորդ էր և լաւ անուն է թողել այնտեղ։

Պատճառը մի փոքրիկ թիւրիմացութիւն էր, որը բարեբաղդաբար անցաւ։ Ահա այսպէս։ Աչըզեան պատրիարքը հրատարակել է իր կօնդակը, և հրամայված էր, որ մի կիրակի օր Կ. Պոլսի բոլոր եկեղեցիներում, թաղական քարոզիչները կարդան ժողովրդի առաջ։ Բոլոր եպիսկոպոսները կարդացին, բացի Աչէաթճեան եպիսկոպոսից, որը քարոզիչ է Կ. Պոլսի մի թաղում։ Լրտեսները, որոնք վխտում են Ստամբուլի փողոցներում, իսկոյն այդ մասին տեղեկութիւն տուեցին Բ. Դրան, աւելացնելով, թէ՝ «եպիսկոպոսը չէ կամեցել կարդալ կօնդակը»։

Բ. Դրան մէջ, ի հարկէ, այդ լրտեսութիւնը աղմուկ է գցում. կարգադրութիւն է լինում իմանալ, թէ բանը ինչումն է. «եթէ ճիշդ է՝ եպիսկոպոսին աքսորել Կ. Պոլսից։ Պատրիարքարանը ոչինչ միջոց չէ ձեռք առնում։ Լուրը հասնում է իրան Աչէաթճեանին։ Զարմացած՝ եպիսկոպոսը վազում է պատրիարքարան և ուղղակի Աչըզեանին դիմելով, ասում է. «Սրբազան, մթէ դուք չէիք, որ հրամայեցիք ինձ այդ կիրակի օր նախագահել թաղական խորհրդին. ուրեմն ինչպէս կարող էի համ թաղական խորհրդին նախագահել, համ էլ մի և նոյն ժամանակ կարդալ ձեր կօնդակը։ Ինչու չէք պաշտպանում ինձ կառավարութեան առաջ, և ինչու չէք բացատրում կառավարութեան, որ դուք էք պատճառը, որ ես չեմ կարդացել ձեր կօնդակը»։

Եպիսկոպոսի արդարացի պահանջը ստիպում է Աչըզեան պատրիարքին՝ վերջ ի վերոյ բացատրել Բ. Դրան, որ կօնդակի չը կարդացվելու իսկական պատճառն այն էր, որ վերև մէջ բերեցինք և միայն այդ բացատրութիւնից յետոյ Աչէաթճեան Գրիգորիս եպիսկոպոսը ազատ է մընում զանազան պատահարներից։

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Մարաղա, դեկտեմբերի 15-ին

Մարաղան ամբողջովին խաղողի և չամչի հայրենիքն է իր գաւառով. արդիւնաբերվում է մինչև միլիոն պուդ։ Այս արդիւնաբերութիւնը ըսկսվում է սեպտեմբեր ամսից, երբ խաղողը հասնում է։ Այդեպանը մեծ աշխատանք է գործ դնում քաղելու, ջոկելու, խաշելու և մանաւանդ չորացնելու համար։

Այս ամենը լաւ և աջող է գնում՝ եթէ տարին բերրի է և աշունը անձրևային չէ, որպէս եղաւ այս աշունը։ Անցեալ տարվայ բերքը նուազ էր և այդ պատճառով թանգ առնվեց։ Այս տարվանը խիստ առատ է. բայց անձրևից թաց եղաւ խաղողը և անցեալ տարվայ վաճառականութեան վնասներից զգուշանալու պատճառով՝ վաճառականները ակամայից էժան են գնում, այն էլ քիչ քանակութեամբ։ Լաւ տեսակը առնվում է 50—60 կօպէկով տեղական լիտրը, որը 16 ֆունտ է։ Ռուսաց թղթադրամի սակագնի անկումը՝ աւելի ևս դանդաղացրեց գործը։ Նոյնը սովի հարցը։

Աքսային ընկերութեան առաջարկութիւնը՝ այն է կրկնակի ստանալը իւրաքանչիւր բեռան համար՝ մերժվեց կառավարութեան կողմից, Թավրիզի հայ վաճառականութեան խնդիրքով։

Մեր վաճառականները անցեալից խրատված՝ անհաշիւ և գաղտագողի չեն անում իրանց գնումը։ Այստեղի վաճառքը առանց բացառութեան ամբողջապէս էլ Աստրախան է ուղարկվում, միայն այն ժամանակ, երբ Վոլգայի ծովաբերանը սառուցից ազատ է լինում։

Տեղիս հայերը ունեն երկու գլխաւոր արհեստ. մեծ մասը հիւսներ են, որոնք չամչի համար արկղներ են պատրաստում, փոքր մասը՝ զինագործներ են (չախմախասաղներ), որոնք չինում և պատրաստում են զէնքեր, գլխաւորապէս հրացան, իսկ այդ հրացանները ուղղակի կամ կողմնակի քրդերի ձեռքն են հասնում, որոնք, չը գիտէք թէ որտեղից են գտնում դեղին մէջ ինանները և զէնքին 4—5 հատ տալով՝ փոխադրում են իրանց պէտք տեղերը։

***

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Հեռագիրը լուր բերեց Ֆրէպպէլ եպիսկոպոսի մահվան մասին, որը շատ աչքի ընկնող դեր էր խաղում ֆրանսիական պատգամաւորների ժողովում։ Հանգուցեալը էլզասցի էր և յայտնի էր որպէս ջերմ աղգասէր, նոյնպէս և պապական գահին հաւատարիմ հոգևորական։ Վատիկանեան ժողովում Ֆրէպպէլ պապի անսխալականութեան ամենամոլեռանդ պաշտպաններից մէկն էր։ Էլզասցիներից շատերի նման, Ֆրէպպէլ ատում էր գերմանացիներին, և Դէրուլէդի նման վրէժխնդրութեան ջերմ կուսակից էր։ Եկեղեցական հարցերի վերաբերեալ պօլէմիական բնաւորութիւն կրող բացի մի քանի բրօշիւրներից, հանգուցեալը հրատարակել է և մի քանի լուրջ գրուածքներ եկեղեցական պատմութեան վերաբերեալ։

—Անգլիական կլուբի նախագահը Բիարրիցում, ուր այժմ ապրում է Գլադստոն, առաջարկեց պատուաւոր անդամ ընտրել անգլիական հռչակաւոր քաղաքական գործիչին։ Կլուբի անդամները, որոնք մեծ մասամբ պահպանողական կուսակցութեանն են պատկանում, սևացրին Գլադստոնին, և մի այդպիսի քուէարկութեամբ տխուր հռչակ ստացած կլուբը, ի հարկէ, զրկվեց իր նախագահից, որը անյապաղ հրաժարական տուեց իր պաշտօնից։ Լիվերպուլում, Գլադստոնի ծննդավայրում, պահպանողականները, որոնք քաղաքային խորհրդի անդամների մեծամասնութիւնն էին կազմում, իսկապէս նոյնպէս մերժեցին Գլադստոնին պատուաւոր քաղաքացիութիւն տալու առաջարկութիւնը, սակայն պահպանողականները այդտեղ աւելի խորամանկ կերպով վարվեցան։ Զը նայելով որ ներկայ եղող անդամները բոլորն էլ սպիտակ քուէներ տուեցին Գլադստոնին, բայց ընտրութիւնը չէր կարող կատարված համարել, որովհետև քուէարկողների թիւը օրինական մեծամասնութիւն չը կազմեց, քաղաքային խորհրդի 19 անդամների դահլիճից փախուստ տալու պատճառով։ «Daily News» լրագիրը մի առաջնորդող յօդուածով մերկացնում է պահպանողականների այդ ստոր ինտրիգները և ասում է թէ այդպիսի վարմունքը անվայել է քաղաքական մի լուրջ կուսակցութեան համար։

—«Հիւսիսային գործակալութիւնը» Թէհրանից հաղորդում «Ռէյտէրի» գործակալութեան ստացած հեռագիրը դեկտեմբերի 14-ին (26-ին)։ Հոգևորականութեան անդամների մի որոշ թիւը պահանջում է՝ ցոյց տալ իրանց ծխախոտի մենաւաճառութեան վերացման պաշտօնական գոկումէնտը, և միայն այն ժամանակ իրանք թոյլ կը տան մահմետականներին ծխախոտ ծխել։ Երէկ Թէհրանի փողոցներում շրջաբերականներ էին տարածում, որոնցով հրաւիրվում էին մահմետականները՝ սրբազան պատերազմ սկսել և կոտորել եւրօպացիներին։»

—«Siécle» լրագիրը հաւատացնում է, թէ ռուսաց ֆինանսական շրջաններում խորհուրդ են տալիս Ֆրանսիայի հետ առևտրական դաշնագիր կապել, սակայն այդ հարցը մինչև այժմ վճռված չէ։

—Դեկտեմբերի 11-ին (23-ին) Հռոմի պապը ծոնեց իր քահանայութեան յիսուն և չորրորդ տարեդարձը։ Առաւօտեան 8 ժամին նա պատարագ մատոյց իր մասնաւոր աղօթարանի մէջ պապական ամբողջ պալատի ներկայութեամբ և ապա, անձամբ ս. հաղորդութիւն տուեց մի քանի արտօնացեալ անձինքներին։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՕԴԵՍԱ, 24 դեկտեմբերի։ Օդեսայի հացավաճառները թոյլտուութիւն են խնդրել Օդեսայի վրա տրանզիտով անցկացնելու Ռումինիայի ցորենը։

ՎԼԱԴԻՎՕՍՏՕԿ, 24 դեկտեմբերի։ Սեպտեմբերի 23-ին Կրօնշտատից ուղևորված գերմանական «Բօմուլօս» նաւը երէկ հասաւ այստեղ, 18,692 պուդ բելներով, որոնք Ուսուրի երկաթուղու համար են։

Կ. ՊՕԼԻՍ, 24 դեկտեմբերի։ Մեծ վիզիրը առաջարկեց բօլգարական գործակալ Վուլկովիչին Թիւրքիայի միջնորդութիւն, ֆրանս-բօլգարական ընդհարման գործի համար։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 24 դեկտեմբերի։ Բարձրագոյն հրամայված է.—Նոյեմբերի 15-ին, Վլադիվոստոկի գանձարանից 348 հազար ռուբլի գողացողներին գտնողին տալ 5,000 ռուբլի, իսկ գողացած գումարը գտնելու համար, գտած գումարի 10%։

ԼՕՆԴՕՆ, 24 դեկտեմբերի։ Հավանայում, Շոէյնիցի և Զիգօրինի մէջ տեղի ունեցած չախմատի խաղին, յաղթութիւնը մնաց Զիգօրինի կողմը։

ՍՕՖԻԱ, 24 դեկտեմբերի։ Բօլգարական կառավարութիւնը, պատասխանելով Թիւրքիայի առաջարկութեան՝ հաղորդելու Շադուրնի մէջնադէպքի մանրամասնութիւնները,—կրկնում է արդէն լաւ յայտնի փաստերը և քննում այն հարցը, թէ Շադուրնի աքսորելով խախտվում է արդեօք դաշնագիրը թէ ոչ։ Բօլգարական կառավարութիւնը պընդում է, որ ինքը իրաւունք ունի աքսորելու օտարականներին և վերջում յոյս է յայտնում, որ ֆրանսիական կառավարութիւնը կը փոխի իր վճիռը, և կը վերականգնեցնի իր դիպլոմատական յարաբերութիւնները Բօլգարիայի հետ։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՕՐՍԱ

Դեկտեմբերի 24-ին

Լօնդոնի վրա	10	ֆունտ	արժէ	101 ր.	90 կ.
Բերլինի վրա	100	մարկ	—	50 »	05 »
Պարիզի վրա	100	ֆրանկ	—	40 »	40 »
Ոսկի	—	—	արժէ	8 »	18 »
Մաքսային կուպօններ			—	163 »	50 »
Արծաթ	—	—	—	1 »	19 »
Բօրսային դիսկօնտներ			—	$6^1/_2$ »	8%
Պետ. բանկի 5% տոմս	1	շրջանի		102 »	62 »
— — — —	2-րդ	—		102 »	62 »
— — — —	3-րդ	—		— »	— »
— — — —	4-րդ	—		— »	— »
— — — —	5-րդ	—		— »	— »
— — — —	6-րդ	—		102 »	25 »
6% ոսկեայ բէնտա				166 »	— »
4% ոսկեայ փոխառութիւն				— »	— »
Արևելեան 5% փոխառ.	1-ին	շրջ.		— »	— »
— — —	2-րդ	—		102 »	37 »
— — —	3-րդ	—		102 »	75 »
Ներքին 5% առաջին փոխառութ.				240 »	25 »
— — երկրորդ		—		219 »	— »
Պետական. երկաթուղային բէնտա.				103 »	25 »
$5^1/_2$ բէնտա				— »	— »
4% ներքին փոխառութեան				95 »	25 »
5% գրաւ. թղթ. աղն. կալ. բանկի				101 »	75 »
Աղն. կալ. բանկի խաղարկութեան գրաւ. թղթ.			—	199 »	— »
$5^1/_2$% վկայակ. գիւղ. հող. բանկի.				104 »	75 »
$4^1/_2$% գրաւական թղթեր կալուած. փոխ. կրեդիտ. ընկեր. մետալ.				153 »	75 »
— — — թղթադ.				102 »	— »
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. ընկերութեան օբլիգացիաները.				100 »	50 »
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ.				100 »	25 »
Օդէսայի — —				101 »	25 »
Թիֆլիսի — —				— »	— »
Գրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի.				— »	— »
— — Քութայիսի —				— »	— »

Ս. Պետերբուրգի բօրսայի տրամադրութիւնը խաղաղ է։

ՏԵՂԵԿԱՑՈՒՑ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Ճանապարհորդական գնացքներ Թիֆլիսի և Բաթումի մէջ.

№ 1

ԲԱԹՈՒՄԻՑ մեկնում է . . . . 9 ժ. 45 ր. առաւ.
ԹԻՖԼԻՍ հասնում է . . . . . 9 » 52 » երեկ.

№ 2

ԹԻՖԼԻՍԻՑ մեկնում է . . . . 9 ժ. 30 ր. առաւ.
ԲԱԹՈՒՄ հասնում է . . . . 9 » 45 » երեկ.

Պօստային գնացքներ Բաթումի և Բագուի մէջ.

№ 3

ԲԱԹՈՒՄԻՑ մեկնում է . . . . 11 ժ. 25 ր. երեկ.
ԹԻՖԼԻՍ հասնում է . . . . . 12 » 25 » ցերեկ.

ԹԻՖԼԻՍԻՑ մեկնում է . . . . 1 › 20 › ցերեկ.
ԲԱԳՈՒ հասնում է . . . . . 7 › 30 › առաւ.

№ 4

ԲԱԳՈՒԻՑ մեկնում է . . . . 11 ժ. 10 ր. գիշեր.
ԹԻՖԼԻՍ հասնում է . . . . 5 › 50 › երեկ.
ԹԻՖԼԻՍԻՑ մեկնում է . . . 6 › 50 › երեկ.
ԲԱԹՈՒՄ հասնում է . . . . 8 › 15 › առաւ.

Խառն գնացքներ Թիֆլիսի և Գանձակի մէջ

ԹԻՖԼԻՍԻՑ մեկնում է . . . 9 ժ. 20 ր. երեկ.
ԳԱՆՁԱԿ հասնում է . . . . 10 › 10 › առաւ.
ԳԱՆՁԱԿԻՑ մեկնում է . . . 7 › 35 › երեկ.
ԹԻՖԼԻՍ հասնում է . . . . 7 › 30 › առաւ.

ՌՈՒՍԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՇՈԳԵՆԱՒԵՐ

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 8 ժամին երեկոյեան, շրջական ըէյսով, Բաթումից դէպի Օդէսա.

ԵՐԵՔՇԱԲԹԻ, 4 ժամին երեկոյեան նմանապէս։

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 7 ժամին երեկոյեան, Բաթումից դէպի Կ. Պոլիս։

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ սրանով յայտնում է, որ փետրվարի 1-ից, 1892 թուի, վարձով է տրվում քաղաքային տանը, Երևանեան հրապարակի վրա, մի նկուղ, գինու պահեստի համար, մի խանութի հետ միասին, որը յարմար է առևտրի համար։ Գնի մասին կարելի է տեղեկանալ Ուպրավայի տեսչությունում։ 1—3

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից։
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝
Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան (և ատամնացաւի) սիֆիլիսի և աչքացաւի։
Դ. Գ. ԲՈՒԴԿՕՎՍԿԻ—10—11 ժ. ներքին, երեխայոց և կանանց ց.
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Մ. Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆՑ—11½—12 ժ. կանանց և երեխայոց ց.
Մ. Զ. ՔԱՆԱՆԵԱՆ—12—12½ ժ. կանանց ց. և մանկաբարձութեան։
Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի և քթի ց.
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—12½—1 ժ. ներքին և երեխայոց ց.
ԵՐԵԿՈՆԵՐԸ՝
Ա. Բ. ԱԼԵԿՍԷՅԵՎ—5—6 ժ. նեարդային ց. և էլեկտրաբուժութեան։
Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—5—6 ժ. երեխայոց և ներքինց.
Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—6—7 ժ.
Ա. Ա. ԴԱԴՕՄՍԿԻ—5—6½ ժ. կաշուի ցաւերի, սիֆիլիսի և վիրաբուժութեան.
Վճար—50 կ.։ Հաժախորհրդի (կօնսիլիումի) համար առանձին։
1—52 (հ) Հիւանդանոցի վերատեսուչ բժշկապետ Նաւասարդեան

„ԱՐԱՔՍ“ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍ

Ինչպէս յայտարարած էինք, «Արաքսը» այսուհետև հրատարակվելու է կանոնաւորապէս իւրաքանչիւր տարվայ ապրիլ և դեկտեմբեր ամիսների սկզբներում. սակայն 1892 թուականին, ի նկատի ունենալով մի քանի կարևոր խնդիրներ, «Արաքսի» գրքերը լոյս կը տեսնեն մինը միւսից յետոյ մինչև մայիս ամսի սկիզբը, եթէ բաժանորդագրութիւնը յաջող ընթանայ մինչև յունվար ամիսը։ Բաժանորդագրութիւնն է, ճանապարհածախսով, երեք բուբլի։

ԹԻՖԼԻՍՈՒՄ կարելի է բաժանորդ գրվել կենտրոնական և Կովկասեան գրավաճառանոցներում։

«Արաքսի» հետ գործ ունեցողները և առհասարակ բաժանորդ գրվողները դիմելու են Պետերբուրգ այս ապահով հասցէով.

Петербургъ. Симеону Гуламирянцу. 2—2

ГОРОДСКАЯ ПРОФЕССІОНАЛЬНАЯ МАСТЕРСКАЯ
ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԻԳԱԿԱՆ ԱՐՀԵՍՏԱՆՈՑ

Հրաւիրում է մի անձն հաշվապահութիւնն Արհեստանոցում աւանդելու համար։

Յունվարին աշակերտների նոր ընդունելութիւն կը լինի։ Արհեստանոցը մտնել ցանկացողներին խնդրում են այժմեանից արդէն խնդիրը ներկայացնել։

— Արհեստանոցը գտնվում է. Կաթոլիկաց և Միջի փողոցի անկիւնում, Դաւիդովի տանը։ 3—3

ԼՈՑՍ ՏԵՍԱԻ Ֆրանսերէնից հայերէն թարգմանված ԺՈՐԺ ՕՆԷԻ „ԴՕԿՏՕՐ ՌԱՄՈ“ հեղինակութիւնը, մեծադիր 375 էջ։ Գինը 80 կ.։ Թիֆլիսում վաճառվում է կենտրոնական գրավաճառանոցում. Բագուում՝ եղբայրներ Բէգլարեանցի մագազինում. Շուշում՝ Աբրահամեանի գրավաճառանոցում և Գաբիլեանի մագազինում։ Ուրիշ քաղաքներից դիմել թարգմանչին. въ Шушу, Никитѣ ХАНДАМИРОВУ. Գինը 1 ր.։ 2—6

ԼՈՑՍ ՏԵՍԱԻ
ԷՎԷԼԻՆԱ
ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ վէպ (հոգեբանական էտիւդ).
Գինը 50 կոպէկ (պօստի ծախսով)
Ծախվում է. „Մշակի“ խմբագրատանը, կենտրոնական և Խիդեկելի գրավաճառանոցներում և Միքայելեան կամուրջի վրա գտնվող Յովհաննէսովի գրավաճառանոցում. 12—20

ՆԱԽԱԶԳՈՒՇՈՒԹԻՒՆ,
ՊԱՊԻՐՈՍՆԵՐԻ ԹՂԹԻ ՏԵՏՐԱԿՆԵՐԻ ԵՒ ԳԻԼԶԱՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ
ՍԷՐԳԷՅ ՄԻԽԱՅԼՈՎԻՉ **ԱՆԱՆՈՎԻ**

Զգուշացնում է իր բոլոր առնողներին, որ վերջին ժամանակներս, աչքի առջև ունենալով ահագին պահանջ իր ապրանքների և նրանց բարձր արժանաւորութիւնը, հանդէս եկան բազմաթիւ կեղծումներ, և մինչև անգամ «Анановъ» ազգանունը նմանողութեան է ենթարկում, տալով մի և նոյն տառերով Ананасъ» բառը։ Հասկանալի է, որ այդ անվում է այն նպատակով, որ Անանովի լաւ տեսակի ապրանքների հետ միաժամանակ ծախվեն և իրանց ստոր տեսակի ապրանքները, որոնք Անանովի ֆաբրիկայի ապրանքների հետ ոչինչ նմանութիւն չունեն։ Թէև այդ տեսակ նմանողութիւնները և ապացուցանում են, որ Անանովի ապրանքները ամեն մրցութիւնից դուրս են, սակայն չը կամենալով որ հասարակութիւնը մոլորվեան մէջ ընկնի և վատ ապրանքներ ձեռք բերէ, Անանովի ֆաբրիկան զգուշացնում է, որ իր թղթերի իւրաքանչիւր թերթը կրում է ֆիրմայի դրոշմը և պէտք է պահանջել, որ բոլոր էտիկէտների վրա ստորագրված լինի Սէրգէյ Անանովի ստորագրութիւնը։

ՆԱԽԱԶԳՈՒՇՈՒԹԻՒՆ

Անանովի գործարանի պապիրոսների թղթի տետրակները և գիլզաները պատրաստվում են ֆրանսիական ամենալաւ և անվնաս թղթից (արժանացած է բժշկական վարչութեան թոյլտուութեան մարտի 21-ին, 1889 թ.), համարվելով աշխարհիս ամենալաւերը և վարձատրված լինելով 1888 թուին Բրիւսէլի համաշխարհային ցուցահանդէսում մեծ արծաթեայ մեդալով, 1889 թ. Մադրիդի ցուցահանդէսում մեծ ոսկեայ մեդալով, նոյն թուին Մադրիդի jury շնորհեց Անանովին diplome d'honneur, որը համապատասխան է մեր պետական դերբին։ Վերջապէս 1890 թուին Անանով ստացաւ Բրիւսէլի միջազգային մրցման ժամանակ մեծ ոսկեայ մեդալ։ ՀԱՍՑԷՆ՝ Ростовъ на Дону, Сергѣю Михайловичу Ананову. 8—10

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ հոգաբարձական խորհրդարանում՝ յունվար ամսիս 8-ին 1892-ամի, երեկոյեան 8 ժամին, կը լինի ամուրդ (առանց կրկնամրդի) կապալով տալու նորակառոյց 18 կրպակները հանդերձ նկուղներով, որոնք գտնվում են 3 Ալէքսանդրեան թաղում, Կուզնեցկի փողոցում։ Պայմանաթուղթը կարելի է կարդալ հոգաբարձութեան դիւանատան մէջ ամեն օր, բացի կիրակի և տօն օրերից, առաւօտեան 10—12 ժամ։ 3—3

ՏՕՆԱԾԱՌԵՐԻ համար
ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ՄԱԳԱԶԻՆ **Վ. ԳՐԻՎՆԱԿԻ**

Ստացաւ ահագին ընտրութիւն ԸՆԾԱՆԵՐԻ, ԶԱՐԴԵՐԻ և ամեն ինչ որ հարկաւոր է շքեղ և էժան ՏՕՆԱԾԱՌԵՐ սարքելու համար։ Պ.պ. օտարաքաղաքացիների համար կան մանրամասն ՍԱՐՔ ու ԿԱՐԳ մեծ և փոքր տօնածառերի համար, 5 բուբլուց մինչև 150 բուբլի արժողութեամբ, պատրաստ ուղարկելու համար։ Կայ տնային բենգալեան կրակ. նոյնպէս կան պարֆիւմերական ժողովածուներ շքեղ արկղիկներում, ընծաների համար։ 4—10

ԱՄԵՆԱԿԱՐԵՒՈՐ ՏԵՂԵԿԱԳԻՐ վաճառականական դասակարգին պատկանող իւրաքանչիւր անձի համար ու ՄԱՏՉԵԼԻ ՁԵՌՆԱՐԿ առևտրական հաշվարարութիւնը առանց ուսուցչի օգնութեան ուսումնասիրելու համար։

Ս. ՄԱՆՈՒԷԼԵԱՆԻ
ՁԵՌՆԱՐԿ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՀԱՇՎԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ

Տոկոսների լիակատար աղիւսակներով, 1-ից մինչև 10,000 բուբ. համար. 1%-ից մինչև 12%.
Վաճառվում է եղբարց Յովհաննէսների բանկային գրասենեակում և հեղինակի մօտ. Тифлисъ, Нагорная ул., № 9. Օտարաքաղաքացիք դիմում են վերջին հասցէով՝ С. П. Мануэльянцу.
Գինն է 1 բուբլի։ Փոստի ծախս 21 կ. Գրավաճառներին զիջում կը լինի։ 52—150

ԿԻՆ ԱՏԱՄՆԱԲՈՑԺ Մ. Ր. ՀԷԶՈՒՐԵԱՆ
Ընդունում է հիւանդներին ամեն օր, 9 ժամից առաւօտեան մինչև 5 ժամ կէսօրից յետոյ, Գոլովինսկի պրոսպէկտ, տուն Անանովի, № 22. 8—15

Մ. Գ. ՑԻՑՏԼԻՆԻ
ԺԱՄԱՑՈՑՑՆԵՐԻ ՄԱԳԱԶԻՆԻ
ՕՊՏԻԿԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԸ



Պալատի այգու դիմաց, անկիւնի մագազինում, ստացված է մեծ ընտրութիւն՝ ոսկեայ, նոր ոսկեայ, նիկելեայ, պողպատեայ և կրիայի ոսկորից ԱԿՆՈՑՆԵՐ, ՊԷՆՍՆԷՆԵՐ և ԼՕՐՆԷՏՆԵՐ։ Թատրոնական և դաշտային ԲԻՆՕԿԼՆԵՐ, ՋԵՐՄԱՁԱՓԵՐ, թէ սենեակների, թէ դուրսը կախելու և թէ վաննաների համար։ Վերաստուգված և վկայական ունեցող ՄԱԿՍԻՄԱԼ ջերմաչափեր։ Լօրնէտի և պէնսնէի համար ոսկեայ, արծաթեայ, նոր-ոսկեայ շղթաներ, նմանապէս մետաքսեայ և մետալական թելեր։

Ակնոցներ և պէսնէներ տրվում են նմանապէս բժշկների պատուէրով։

Մագազինում յանձն են առնում նմանապէս փչացած իրերի նորոգելը և ապագիների դնելը։

ԳՆԵՐԸ ամենաչափաւոր են։ 36—50 (հ)





Дозволено цензурою, Тифлисъ, 25 Декабря 1891 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.